

ծիշդ բառ առ բառ համաձայն հայերէնին, quoniam enim per lignum amissimus il-
 lud, per lignum iterum manifestum om-
 nibus factum est, ostendens altitudinem
 et longitudinem et latitudinem in se ==
 քանզի ի ձեռն փայտին ի բաց բնկեցաք
 զնա, փայտի դարձեալ երեւելի ամենցուն
 նորէ, ցուցանելով զբարձրութիւն և զեր-
 կայնութիւն և զլայնութիւն յինքեանս:

Ուրիմն հայերէնի բնագիրը յունարէն է
 թէ լատիներէն:

Հ. Յ. ԱՒԳԻՐ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԷՊԵՐՈՒ

ՅԻՇԱԾ ԶԻԵՐԸ

ՔՐՈՒԿԻԿ - Ջալալիժ, Կապոտ - Քրուակ,
 Ռախշէ - Բալաք, Բօզէ և Կռադ, և այլն:

« Ռոստամ - Ջալի » հայ-պարսկական
 դիւցազնավէպին ծանօթ եղողները գիտեն
 որ՝ վէպին հերոսը եղող Ռոստամի ձիուն
 անունը «Ռախշ» էր և ծովէ բռնւած:

Ձին ծովէ հանւելու այս դէպքը կ'յի-
 շեցնէ նաև հէքիաթացած «Քիօն-Օղլի»ի
 նաման պատմութիւնը՝ իր կրադ (Krad)
 և Բօզէ (Bozè) ծովային ձիերու մասին:
 Դեռ Սասանից Տան դիւցազն Սանսաարի
 և Թլու-Դաւիթի ծովային ձին՝ Քրուակ-
 Ջալալիժ՝ շատ ծանօթ է:

Դիտելի է որ՝ Ռոստամի Ռախշ կամ
 Ռախշէ-Բալաքը ձիու անունն ինքնին ա-
 ղերսակից է մեր Սասան Դիւցազներու
 ձիանունին: Ռախշ պարսիկ բառը (ընտրի
 աշխէտ ձի)՝ Որձ քրտակ-ի իմաստով կ'գոր-
 ծածի ժողովրդի մէջ: Այդ դեռ հայ նկա-
 րագրով՝ շեշտող Սասանից Տան մէջ՝
 Քրուակի հայացի հոմանիշովը փոխանակ-
 ւեր է: Կ'մնայ Բալաքը (Բէլէք) բառը՝ որ
 ժողովրդական ասուսով կ'նշանակէ խայ-
 տաքդեռ, ձերմակի՝ վրայ խառտուիկ ցանուած

թիծեր ունեցող, գորշասպիտակ, ձերմկտուիկ:
 Այս նշանակութեան մէջն են բոլոր փո-
 փոխակներուն յիշած անունները. —
 Ռախշէ-Բալաք, Ռիխշէ-Բալաք, Ռախ-
 շի-Բալաք, Նրիշէրաք (Յովս., Հլկիւ.,
 Սրունձտ.):

Յովսէփեանի փոփոխակին մէջ կ'յիշէի
 դեռ Բալաք յունսի կամ լոկ յրանի ա-
 նունը, որ դարձեալ պարսիկ յիվանի, շի-
 վան (Երիտասարդ, մատղաշ) == քրտակ
 իմաստը կու տայ:

Սրունձտեանի յիշած Նրիշէ բալաք-ի
 «Նրիշէ» բառը եթէ սխալ հնչու.մնագրու-
 թիւն մը չէ «Ռըիշէ» ձեւին՝ դարձեալ
 խայտաքդեռ միտքը կու տայ, Բալաք-ի
 հետ կազմելով կրկնաւոր մը:

Հայկունու փոփոխակներէն մէկին մէջ
 կ'հանդիպինք նաև Աշխարի բալաք և Աշ-
 խալի բալաք: ձեւերուն, որք եթէ արարե-
 ընէ կշիթ (նշանաւորագոյն) բառէն ծագած
 չեն՝ աղաւաղ ձեւերն են գուցէ Ռախշ ա-
 նունին, կամ՝ Բալաք յրանի-ի «չըւան»
 իբր յիսն (աշխարհ) վերցւելով տէչտ
 պատմողներէ՝ եղած է աշխարի-բալաք:
 Կրնայ նոյն իսկ հայերէն աշխես բառին ա-
 դաւաղ յիշւածը մ'ըլլայ...:

Սասանից Տան վէպին մէջ յիշւած
 «Քրուակիկ-Ջալալին» կրնայ մեկնել եր-
 կու կերպով: Ջալալիժ՝ եթէ վերցնենք իբր
 արարերէն չիլալ կամ չիլալի՝ պիտի նշա-
 նակէ մեծափառ, վեհօրայեռ ունեցող, նաև՝
 անհնակարտ, ըմբատ, իսկ թէ վերցնենք
 իբր Ջալալիժ՝ պիտի նշանակէ գորշասպիտակ,
 գորշասպիտակ (շալ = چال), ու նարնչա-
 դեղին-ոսկեգոյն (ալ = آل), վերջինս՝ ժո-
 ղովրդական սահմանուսով:

Երկուքն ալ հասասարապէս կ'յարմա-
 րին մեր զոյգ վէպերուն ծովային հրեղեկ
 ձիերուն, Քրուակիկ - Ջալալին՝ ըլլայ՝ թէ
 Ռախշէ-Բալաք, Բօզ-Բիլաւի՝ կամ կռադ
 ու Բօզէ, Բէլէան կամ Բալաք - չըւան,
 և այլն:

Քիօն-Օղլու կրադ կամ Բօզէ ձին՝ նոյն
 են անունով: Գրք կ'նշանակէ գորշասպի-
 տակ, և քօզ, քօզ՝՝ փոխաղբարձարք գրք
 կամ մոխրասպիտակ:

Աւրեմն բոլոր յորջորջումներու միակ նշանակութիւնը՝ հերոսներուն հեծած հրեղէն ձիուն համար՝ է՝ խայտամար, խառտտիկ, ապառա՛ Բայց չմոռանա՛ր որ խառտտակերութիւնը կազմած է սպիտակի վրայ գորշ քիժոնկտերով։

Արդ, ժողովրդական ասանդութիւններու և դիցական անտիպապաշտութեան բերնով կ'լսենք յաճախ այս տեսակ խոսք մը՝ ձիու մը հասցէին. —

— «Դու կ'ըսես Արճակու ծովէն են քաշեր...»։

կամ թէ՛

— «Հրեղէն ձի է, ծովուց են քաշեր»։
 Կարևորն ան է որ՝ ժողովուրդ՝ «Մովուց են քաշեր» կ'ըսէ հեզանբար միայն այն տեսակ ձիերու համար՝ որոնց մորթին գոյնն է ձեղմակի վրայ գորշ քիժերով, և ձին ալ այդ գոյն մորթին հակառակ՝ վատոյժ, նիհար, ոչ—ազնիւ ցեղէ կ'ըլլայ։ Երբեք այդ հեզութիւնը չեն յատկացնե՛ր սպիտակխայտ գոյնէ տարբեր ձիերու։ Քիչ անգամ նաև՝ առանկապէս հրագոյնեկարդեյի (աշխէս) մորթին վրայ սպիտակոսն, և վտիտ ձիերու համար կ'ըսուի։

Չիուն գորշասպիտակ « Բօզ » հանգամանքը՝ միացուց ուրեմն Սասմանց Տան Սանասար և Բաղդասար և Թլուլ-Գաւիթ կամ իրենց յաջորդները՝ Մհեր, Պարոն-Տէր-Ներսէս, Համզա-Փահլէվան և այլն, «Յէրան-Թիրան»-այ Ռոստամն ու իր յաջորդները, ու վիպական Քեօռ-Օղլին։

Աս միակ գորշ գոյնը՝ կարծիքի թելին պէս կ'անցնի այս բոլոր պատմա-վիպական դէմքերու շարքէն, ու կ'անցնի դեռ ևս ուրիշ հէքեաթներու մէջ երեցող քաշ, դիվ, աղամորդի եղող հերոսներու նւաղուն պատկերաշարէն, կազմելով այսպէս թանձրացած միութեան գիծ մը՝ ցիրուցան դիցազնավէպերու մէջ։

Հետաքրքրական է հիմա յիշել որ՝ ժողովրդի հոգևոր կամ հոգևորացած ասանդութիւններու կարգին՝ Սուրբ Սարգիսը կը կոչուի « Բօզ ձիառար », և իր ձիուն անունն ալ « Բօզ ձի »։

Ուրեմն Ս. Սարգիսն ալ ժողովրդային

վիպական անձ մ'է՛ թէ և կրօնական տարազով։ Աւելցուցէք նաև Ս. Սարգիսի՝ Կ. Պոլսէն աղջիկ փախցնելու հանգամանքը՝ իր քօզ ձիով ու քօզ ձիաւորութեամբ, բաղդաստեցէք Քեօռ-Օղլու կուղի կամ Բօզէ ձիով Կ. Պոլիս անցնիլ ու Այվազը փախցնելու զրոյցին հետ՝ և ահա կը գտնէք միութեան կեդրոն մը՝ բոլոր ժողովրդային այլակերպած վէպերուն մէջ։ Այդ միութեան կեդրոնը Հայաստանի սիրտն է, որ կ'ըսաքսի Սլարաստ, Տուրուբերան ու Վասպուրական եռահիմ համարին շրջանին մէջ...։

Ծովային հրեղէն ձիերու օրինակներ շատ կան մեր ժողովրդական հէքեաթներուն մէջ։

Այդ կարգի ձիերը ձեռք բերելու համար՝ անպայման պէտք է գիտնալ անոնց սանձին տեղը, որ ընդհանրապէս ծովու մը բերան՝ քարի մը տակն է։ Հերոսը կը գտնէ այդ քարը, և տակը հղած սանձն առնելով՝ կ'զարնէ ծովին ջրերուն, և ահա ծովային ձին դուրս կու գայ պատրաստ՝ իր սանձին ու տիրոջը։ —

կամ թէ՛ ձին իր պոչին մազէն կ'Թողու դիւցազն տիրոջ քով, և ան իր ուզած ատեն՝ մազը կրակ տալուն պէս՝ ձին կ'հասնի կազմ ու պատրաստ։

Սասմանց Տան վէպին մէջ այդ հրեղէն ձին — Գուռկիկ-Չալալին — դուրս կու գայ ծովէն՝ Սանասար-Բաղդասարի ծագման հուլին մէջ, իսկ Թլուլ-Գաւիթի հուլին մէջ՝ կապուկ է երկու պատի մէջ՝ կամ թէ՛ Սեւ-Սարի անմատչելի բարձրութիւններուն վրայ կը գտնուի։

Ուրիշ փոփոխակով մը՝ ձին ծովամէջի պարտէզէն ներս՝ կազմ ու պատրաստ («գինած [թամրած], կէծական թուր վրէն կախուած») կ'տեսնէ Սանասար։

Սասմանց Տան Գուռկիկ-Չալալին, որուն արագ թռչջի մասին զեղեցիկ նկարագրութիւններ կ'ընեն փոփոխակներէն մաս մը՝ քիտոր ալ կ'յիշուի մասնաւորապէս, արագութեան գաղափարը թւերով ցուցած։

«Յէրան-Թիրան»-իս պատմիչ Մանուկը կ'ըսէր. — «Սանասարի — Բաղդասարի

ձիուն անունը ֆուռոկիկ-Չալալին չէ՛, այլ՝
կապոտ-լազին Սանասարին է, Սե-լազին՝
Քաղաասարին, իսկ ֆուռոկիկ-Չալալին՝ Դաւ-
թին»։ Եւ կը կրկնէր՝ հետեւեալ հանդի-
սական ձևովը. —

— «Կապոտ-լազին՝ Սանասարին,
«Սե-լազին՝ Քաղաասարին,
«Ֆուռոկիկ-Չալալին՝ Դաւթին, —
— «Թախունն ը՛ Մհերին...»։

Երբ հարցուցի թէ Բնչ կ'նշանակէ «Թա-
խունն ը Մհերին» բացատրեց այսպէս. —
«Սանասարի ձին՝ կապոտ-լազին էր, Բաղ-
դասարին՝ Սե-լազին, Դաւթին՝ ֆուռ-
ոկիկ-Չալալին, քախունն է Մհերին», այ-
սինքն՝ «Մհերի ձիու ցեղէն է մնացեր»։

Բայց թէ յատկացես ֆուռոկիկ-Չալա-
լին է որ Մհերի ձիու ցեղէն է մնացեր՝ թէ
չէ Սանասարի, Բաղդասարի և Դաւթի
ձիւրուն ամբողջ քախունը (սարք, կազմ
կամ ցեղ)՝ այնչափ ալ որոշ չէ պատմը-
ւածէն։

Եթէ ամբողջ քախունը Մհերի ձիւն մնա-
ցած ընդունինք՝ այն առնն հարկ կ'ըլլայ
Սանասար-Քաղաասարէն առաջ ենթադրել
Մհեր մը՝ իբր ծագման ճիշդ Սասմանց
Տան։ Բայց բոլոր փոփոխակները համա-
ձայն են որ Մհեր՝ Սասմանց Տան երկրորդ
է յաջորդ ճիւղերուն դիւցազներէն է, իսկ
սկիզբը կ'առնէ Սանասար-Քաղաասարէն՝
կամ Աղբամեղէք և Սանասարէն։

Ուրեմն պէտք է ընդունիլ որ՝ քախունն
ը Մհերին խօսքով կ'ակնարկուի պարզա-
պէս ֆուռոկիկ-Չալալու մասին, որ Մհերի
տակ նշանաւոր դեր է խաղցեր հաւանա-
բար, իր յաջորդ Դաւթին անցնելէ ա-
ռաջ։ Արժէր ուրեմն Մհերի անունով յի-
շատակելը՝ հրեղէն ձիու այն քախունին՝
որուն վրայ վերջած էր նոյնպէս Սաս-
մանց Տան աւանդական Գորքը. — Մհերի
անունով յիշատակած զարծեալ, — Գորք-
ը Մհերին, կամ Գորգը Թերրգին։

Կապոտ-լազին ձին՝ յատուկ է — կ'ը-
սէ Մանուկ — Սանասարին։ Մենք կ'ոտս-
նենք որ ուրիշ փոփոխակներու (variante)
մէջ ալ կ'յիշուին կապոտ-ֆուռոկի ա-
նունով հրեղէն ձիւր։

Իսկ յատկապէս ֆուռոկիկ-Չալալին կու-
պոտ քրտակ կը կոչուի Արտ. Արեղեանի
փոփոխակին մէջ։

Հէրաքենբու մէջ, մասնաւորապէս
«Քիրալիկ» անուանով թագաւորազն և և-
րեք երբոր կրտսեր քաջին ձիւրէն մէկը
յաճախ կապոտ կամ սեւ կ'յիշուի ժողո-
վրդի երանգաճանաչման մէջ, արդէն, սե-
ւ կապոտ գոյները կ'շփոթին այն պատ-
ճառով որ՝ մոյգ-կապոտը սեւ կ'զարնէ,
և փոխադարձաբար մոյգ-սեւը՝ կապոտի։
Չէնով-Յովանի հեծած ձիւրէն քաջա-
գոյնը՝ Սե-կազին կամ Սե-ձի կը կոչուի։
Մնկ. Արեղեան, սակայն, աւելի կտրուկ
խօսքեր մ'ունի կապոտ-ֆուռոկի մասին։
«Սա է — կ'ըսէ — իսկական ժառան-
գական ձին, որ Սանասարից անցնում է
իրեն յաջորդ զլիաւոր հերոսներին, և
վերջն անմահ Մհերի հետ փակած մնում
է վանայ ֆարայրում» (Ազգ. Հնդս. Ժ. 2.
113)։

Եւ շատ ալ քնական ու պատշաճ է՝
կապոտ ածականը ձիու մը համար, որ
կապոտ ծովէ դուրս կու գայ, ու կարո-
ղութիւն ունի «մէջ երկինք՝ մէջ գետին»
սլանալու, կապոտ քորճորսիտները սմբակ-
ներուն տակ ձեծելու...։

Դեռ մինչև հիմա ալ՝ ժողովրդի երգե-
լուն մէջ՝ սիրու մուրատատուր ձին՝ կա-
պոտ քրտակ անունն ունի. — «Կապոտ
ըռուկ հեծեր եմ, Արազին մօտեցեր եմ,
Արազ ինձի ճամբայ տուր, Մայրիկիս կա-
րօցցեր եմ»։

Կապոտ գոյնին քիչ մը բաց երանգին
հետ կ'նոյնանայ յաճախ — ժողովրդի
երեւին մէջ — Բօզ գոյնը, որ վիպական
ու հէրաքենբու հերոսներու հեծած ձիւ-
րուն գոյնն է շատ անգամ Սուր Սար-
գիսի ձին — տեսանք արդէն — Բօզ ձի
կը կոչուի, և ինքը Ս. Սարգիսը՝ Բօզ ձիա-
տը։ Չէնով-Յովան՝ Դաւթին օգնութեան
հասնելու համար՝ նախ Բօզ ձիուն կ'դիմէ։
Շիրին-Շահ (Ոյինէ հէքիմ) կ'ուզէ Բա-
ջանց թագաւորէն և կ'ստանայ Բօզ ձիւ-
արակիւն ժողովրդի երգերուն մէջ ալ քօզ-
քօզ ձիւր կ'յիշուին յաճախ. — «Բէօզ

բազրգեան իկեր ի. բոզ-բոզ ձիեանք կապեր ի»: Մոկաց Միրզի ձին կը կոչուի Բոզ-Բիղաւի: Քեօտ-օղլու ձիերէն մէկը Բոզի անունով է ծանօթ, և այլն:

Կարայտ գոյնը սեւին հետ շփոթելու կամ նոյնանալու պարագային՝ յիշենք որ Արտաշէսի ձին Ա. էր, — Աւան գեղեցիկ...:

Ռոստամի Ռախշ կամ Ռախշ Է-Ֆարսք ձին միտք բերենք և համեմատենք քրդերէն Ռաշ (սև, սևուկ, սևորակ) ածականին հետ: Այդ պարագային՝ Բարսք (խատուտիկ) — ի հետ կը կազմէ Ա. ու ձերմակ, Ա. խատուտիկ գոյնը՝ Յէրանի դիւցազնին ձիուն համար, որ տարբեր կերպով մը՝ աշխես է արդէն:

Իսկ մասնաւորապէս հրեղէն ձիեր՝ գրեթէ անպակաս են մեր ժողովրդական անգիր հէքեաթավէպերուն մէջ: Ամէն հերոս որ գերբնական ուժ ու դեր ունի՝ իր ձին ալ նրեղէն է: Եւ հրեղէն ածականը հոմանիշ է յաճախ ծովային ու քեւտոր մակդիրներուն:

Այսպէս, «Իրնըլլ» անուն հրեղէն ձի մը կ'ըլլուի «Լղպոր Գնէօլ» ի գրոյցին մէջ, ուր Պոռ թագաւորի տեղը կ'ընէ Շէրէ-Ալին:

Հրեղէն ձիու մասին գեղեցիկ պատմուածք մ'է «Բէջան կամ Գոյլզար» հէքեաթա (կանչօր պատմած):

Հրեղէն ձիեր են Լարադար, Խեպօ, Քեարքարա, Կապ, Բեչան, Մրազ ձի անունով հէքեաթային թռչող ձիեր: Հրեղէն կամ ծովային, և կամ թեւաւոր ձիեր ունին Սիրուն-Միրուն, Սվիկ, Քեօտ-Օղլի, Քեաշլիկ, Շայխամայէլ, և այլն, և այլն:

Վերջինիս (Շայխամայէլ) հէքեաթավէպին մէջ մասնաւորապէս կ'ըլլուի «տան մէջ պահուած Կամար-Թայի անունով հրեղէն ձի մը, որ Լուսնաման քառակ սուէ է: Յէրան-Թիւրանայ դիւցազնիւրէն Քուլկ-Սլէմինի ձին՝ Հասպ-Բեչան իր անունով կ'ընշանակէ անմարմին ձի, — այսինքն հրեղէն, Թեաւոր:

Սասանց Տան դիւցազնիւրուն ժառանգական հրեղէն-ծովային ձիերը պայտեղու

մասին ալ միայն մէկ փոփոխակի մէջ յիշատակութեան կ'հանդիպինք. — «Գաւթի ձին հրեշտակ նալեց...»: Այդ միակ կէտը կը կապէ մեր վէպը Յէրան-Թիւրանի վէպին, ուր Ռոստամի ձին ալ հրեշտակի կողմէ պայտեած կ'ըլլուի:


Երկու դիւցազնավէպերը զիրար կ'ըլլացնեն ամէն կէտի մէջ, կամ իրարու շարունակութիւնն են անորոշ ժամանակներու մէջ:

Վան

ՉԻԹՈՒՆԻ

ՀԱՅ ԱՐՈՒԵՍԱԳԻՏՈՒՆԻ ՄԸ

= ԱՆ ԳՂ Ի Ռ Յ Մ Է Զ =



Մոոցուած...:

«Գու Հայ ես. — Մհ Այո՛: Շատ տարիներ առաջ հոն բան մը չի հանդիպեցաւ — ամբողջ ժողովուրդ մը չէր խողխողուեր: Անկէ յետոյ այնչափ դէպքեր հանդիպեցան, գիտէք, որ այդ մոոցուցաւ»:

Այս խօսքերը կ'ուղղուէին երիտասարդ օրիորդի մը, որ դժբաղդ երկրէն փախած էր, ուր ողբերգութիւն մը ծրագրուեցաւ, նախատինք քաղաքակիրթ զգացման, և խժժութիւններ՝ անմահ պատմութեան մէջ, ի գործ դրուեցան: Այդ ոճիրներուն անագանեալ արձագանգները նոյն իսկ՝ հաւասարապէս վիշտ պատճառեցին ծաղկեալ երկիրներու ժողովուրդներուն:

Նա երջանկագոյն երկրի մը մէջ գրտնուած ատենն իսկ, պիտի չի կարենայ սոճնալ այդ ամէնը. և գրելով՝ կոտորածի միջոց իր աչօք տեսած եղբութիւնքը, նորավէպի ձևով՝ Եսթեր տիտղոսին տակ, կը պատասխանէ յօղուածիս սկիզբը դրուած հարցման:

«Մոոցուած. շատ դժուարին բան է կարենալ մոռնալը. բայց մեզի համար որ այս տեսարաններու միջեւ կը քալենք, որ կը լսենք ողորկոծը այս կողպտուած այ-